ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» օգոստոսի 2025 թվականի N: 488 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման» կարգի 6-րդ կետի 5-րդ և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի հունվարի 7-ի N 4-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 7-րդ կետի 1-ին ենթակետերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2025 թվականի օգոստոսի 19-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Տուֆագործների 1 հասցեում (նախկին «Տուֆաբլոկների գործարան»-ի տարածք) անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական

ուսումնավարժություն՝ «Ուժեղ երկրաշարժի հետևանքով որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը շինություններում՝ հրդեհի առկայությամբ» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ գնդապետ՝ Արսեն Ադամյանին:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունը.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական շտապօգնության ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի մարզային կայանը.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը, Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատը.

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արթիկի բաժինը.

5)Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակը.

6) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

7) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը.

8) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Արթիկ» տեղամասը.

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ղեկավար կազմը:

4. Հանձնարարել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

ա. մինչև 2025 թվականի օգոստոսի 13-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

բ. կազմակերպել մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի,

գ.մինչև 2025 թվականի օգոստոսի 18-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին.

2) ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով, ուսումնավարժության ընթացքում ապահովել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն պետին՝

ապահովել մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներին իրազեկումը և ուսումնավարժության լուսաբանումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է